Հ

ՎԵՐՋԱԲԱՆ

Ուտիացոց աշխարհի Ուտիախօս և Թրքախօս Հայերի և Հայից դարձած մահմեդականների բարոյական, նիւթական և տնտեսական աննախանձելի վիճակը ցոյց տուի այնպէս, ինչպէս որ կայ այս բոպէիս։ Ուտիացոց երկիրը իւր բարեխառն կլիմայով և չափազանց պտղաբեր ու արգաւանդ հողերով ու մարգագետիններով, նայելով որ իւր նմանը չունի ամբողջ Կովկասում, բայց նրա բնակիչները գտնւում են աննախանձելի վիճակի մէջ։ Ինչե՞ր ասէք, որ չէ բուսցնում ու աճեցնում այդ օրհնած հողը, ինչպիսի՞ թանկագին բերքեր ասէք, որ չէ արտադրում այդ սքանչելի երկիրը իւր ժրաջան մշակողների համար։ Ամենաընտիր հացահատիկների և պատուական պտուղների ամեն տեսակից զատ, նա բուսցնում է նաև այնպիսի հազուագիւտ բոյսեր և ծառեր, որոնց բուն հայրենիքը Հնդկաստանն է։

Սրանից երեք տարի առաջ՝ ես տեսայ մեր տան բակում սև պղպեղի մի քանի ծառեր, որոնց պտուղները չէ կարելի զանազանել Հնդկաստանից բերուած սև պղպեղի հատիկներից։ Նոյնպէս տեսայ խնձորի մի ծառ, որ տարուայ մէջ երկու անգամ է պտուղ տալիս. նախ՝ յունիսին և ապա հոկտեմբեր ամսին։ Ուտիացոց երկրի ազնիւ մեղրաքն ու կաղինը, բրինձն ու շաղանակը, նուռն